



Տեղեկատվություն նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների խնամակալների համար

Բոլնաս համայնքի թվային ուսումնական փաստաթղթեր

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ուշադրությունը պետք է կենտրոնացնել յուրաքանչյուր երեխայի զարգացման և ուսումնառության վրա: Իրականացվող աշխատանքները պետք է մշտապես վերահսկվեն և արձանագրվեն, որպեսզի կարողանանք վերլուծել և գնահատել մեր աշխատանքը: Այդ գնահատումներն օգնում են ապահովել, որ նախադպրոցական ուսումնական գործընթացում հաշվի առնվի երեխայի զարգացման ողջ ներուժը:

Բոլնաս համայնքի նախադպրոցական հաստատություններում այն իրականացվում է թվային եղանակով՝ Սոնիկում կոչվող համացանցային ՏՏ գործիքի միջոցով: Եթե դուք խնամակալ եք, այժմ կարող եք հետևել նախադպրոցական հաստատության գործունեությանը, ինչպես նաև ձեր երեխայի զարգացմանը և ուսումնառությանը: Նախադպրոցական հաստատության

աշխատակիցները Սոնիկում-ի միջոցով կապ կպահպանեն ձեզ (խնամակալների) հետ:

Հաճախ տրվող հարցեր ու պատասխաններ

Ի՞նչ է Սոնիկում-ը:

Սոնիկում-ը թվային հարթակ է, որը ներառում է (օրինակ) շաբաթական նամակներ, ճաշացանկեր, ժամանակացույցեր, մեր և երեխաների գնահատումները, բլոգային գրառումների ձևով ներկայացված կարծիքներ և ամենօրյա փաստաթղթեր նախադպրոցական հաստատության գործունեության մասին: Դուք նաև կտեսնեք, թե ինչպես են իրականացվող միջոցառումները կապված նախադպրոցական հաստատության ուսումնական ծրագրի հետ, այսինքն՝ ինչ ենք ծրագրում իրականացնել նախադպրոցական հաստատությունում: Դուք կարող եք հետևել ձեր երեխային և նկարների, փաստաթղթերի

ու կարծիքների միջոցով տեսնել, թե ինչով է զբաղված նախադպրոցական խումբը:

Մովորականի պես, դուք նաև բանավոր տեղեկատվություն կստանաք ձեր երեխային նախադպրոցական հաստատություն բերելիս կամ այնտեղից վերցնելիս: Երբ տուն վերադառնաք, կարող եք օգտվել Սոնիկոմ-ից, կարդալ և դիտել նկարները, իսկ ձեր երեխան կարող է պատմել, թե ինչ ենք արել տվյալ օրը դպրոցում:

Ո՞վ կարող է տեսնել իմ երեխայի ու իմ մասին տեղեկությունները:

Որպես խնամակալ՝ դուք կարող եք տեսնել, թե ովքեր են ձեր երեխայի խմբի այլ երեխաները և ձեր երեխայի դասընկերների խնամակալները, ինչպես նաև կարող եք ստանալ ամբողջ խմբին վերաբերող տեղեկատվություն:

Միայն դուք՝ որպես խնամակալ, և երեխաների խմբի համար պատասխանատու ուսուցիչները կարող են դիտել նախադպրոցական հաստատությունում ձեր երեխայի ուսումնառության և զարգացման մասին փաստաթղթերը: Ոչ մի խնամակալ չի կարող դիտել այլ երեխայի զարգացման և ուսումնառության փաստաթղթերը:

Սոնիկոմ-ի փաստաթղթերը նախատեսված են միայն լիազորված անձանց համար: Հետևաբար, դուք չեք կարող պատճենել, տարածել կամ օգտագործել լուսանկարներ կամ փաստաթղթեր այլ հարթակներում՝ սոցիալական ցանցերում, ինչպիսիք են օրինակ՝ Facebook-ը կամ Instagram-ը:

Արդյո՞ք տեղեկատվությունը պահվում է ապահով կերպով:

Տեղեկատվությունը համացանցով ուղարկվում է կողմնորոշված ձևով, ինչպես համացանցով կատարվող բանկային գործառնությունները:

Բոլոր խնամակալները պետք է մուտք գործեն էլեկտրոնային նույնականացման համարով/BankID-ով:

Այն սերվերները, որտեղ պահվում է տեղեկատվությունը, գտնվում են լավ վերահսկվող և լավ պաշտպանված օպերացիոն կենտրոններում: Համակարգերը շուրջօրյա վերահսկվում են պրոֆեսիոնալ աշխատանքային անձնակազմի կողմից, իսկ տեղեկատվությունը մշտապես կրկնապատճենվում և պահպանում է: Համակարգերը պաշտպանված են հրապատերով:

Ինչո՞ւ են օգտագործվում անձնական նույնականացման (ID, personnummer) համարները:

Անձնական նույնականացման համարներն օգտագործվում են այն պատճառով, որ բարձր են անվտանգության և գաղտնիության պահանջները, ինչպես բանկերի կամ Մոցիալական ապահովության գործակալության համացանցով տրամադրվող ծառայությունների դեպքում: Անձնական նույնականացման համարները այժմ կիրառվում են երկրի բոլոր նախադպրոցական հաստատություններում և դպրոցներում՝ յուրաքանչյուր նախադպրոցական հաստատություն և դպրոց հաճախող աշակերտներին և նրանց խնամակալներին ճշգրիտ կերպով նույնականացնելու համար: Անձնական նույնականացման համարը պահանջվում է այն նպատակով, որպեսզի երեխայի վերաբերյալ տեղեկությունները կապված լինեն ճիշտ խնամակալի հետ:

Քանի որ Սոնիկոմ-ում առկա տեղեկությունները պարունակում են անձնական տվյալներ, Բոլնասի համայնքը պարտավոր է հետևել Անձնական տվյալների մասին ակտին (PDA) և շուտով նաև Տվյալների պաշտպանության մասին ակտին:

Որքա՞ն ժամանակ են պահվում իմ երեխայի մասին փաստաթղթերը:

Ձեր երեխայի մասին փաստաթղթերը կպահպանվեն նախադպրոցական հաստատությունում նրա ուսումնառության ողջ ընթացքում: Եթե երեխան տեղափոխվի համայնքի ներսում այլ նախադպրոցական հաստատություն, ապա երեխայի փաստաթղթերը նույնպես նրա հետ տեղափոխվեն:

Արդյո՞ք պահանջվում է համաձայնություն:

Քանի որ Բոլնասի համայնքը ընտրել է Սոնիկում-ը՝ որպես նախադպրոցական տարիքի բոլոր երեխաների ուսումնառության տվյալների արձանագրման գործիք, ձեզնից (խնամակալներից) համաձայնություն չի պահանջվում: Թղթի ու գրիչի փոխարեն այժմ մենք օգտագործում ենք թվային գործիք:

Ուսուցիչները ձեր երեխայի փաստաթղթերում կտեղադրեն ձեր երեխաների նկարները: Սակայն եթե նրանք ցանկանան ձեր երեխայի նկարները տեղադրել նախադպրոցական խմբի փաստաթղթերում, որը հասանելի է խմբի բոլոր խնամակալներին, ապա դուք պետք է տրամադրեք ձեր համաձայնությունը: Համաձայնությունը կարող էք տրամադրել նախադպրոցական հաստատության անձնակազմի հետ միասին՝ սոցիալական մեդիայում, համացանցում և տպագիր նյութերի մեջ ձայնի, տեսանյութերի և պատկերների ձևի միջոցով:

Կարևոր է իմանալ

Պետական փաստաթուղթ

Ուսումնական փաստաթղթերը հանդիսանում են պետական փաստաթուղթ: Համաձայն պաշտոնական փաստաթղթերի հանրային մատչելիության սկզբունքի՝ հնարավոր է պահանջել համայնքի տիրապետության տակ գտնվող պետական փաստաթղթերը: Եթե

որևէ անձ պահանջում է ուսումնական փաստաթղթեր, ապա նախքան փաստաթղթերը տրամադրելը՝ իրականացվում է գաղտնիության ստուգում, որի ընթացքում ջնջում են գաղտնի տեղեկությունները, եթե այդպիսիք կան:

Գաղտնի տեղեկություններ

Ուսումնական փաստաթղթերը գրվում են նախադպրոցական հաստատության աշխատակիցների կողմից: Փաստաթղթերի բովանդակության մեջ չպետք է առկա լինեն գաղտնի տեղեկություններ:

Ողջամտություն ու վարվեցողության կարգ՝ կարևոր տեղեկատվություն ազատ տեքստային դաշտերի մասին

Թվային փաստաթղթերը կարող են պարունակել ազատ տեքստային դաշտեր: Ազատ տեքստային դաշտերը չպետք է պարունակեն անհատի անձնական հատկանիշների նկարագրություններ կամ գնահատումներ: Վիրավորական հայտարարությունները նույնպես չեն թույլատրվում: Մա վերաբերում է Սոնիկում-ից կամ որևէ այլ թվային աշխատանքային գործիքներից օգտվող բոլոր անձանց:

Լրացուցիչ տեղեկատվություն

Եթե ուսումնական փաստաթղթերի հետ կապված այլ հարցեր ունեք, կարող եք դիմել ձեր երեխայի նախադպրոցական հաստատության աշխատակազմին կամ տնօրենին:

Մկսեք հիմա:

Դուք կարող եք մուտք գործել Սոնիկում ձեր համակարգչի կամ սմարթֆոնների և պլանշետների համար նախատեսված հավելվածի միջոցով:

Այցելեք <https://start.unikum.net/> կայք կամ ներբեռնեք Սոնիկում հավելվածը ձեր

սմարթֆոնում կամ պլանշետում: Ընտրեք «Մուտք գործել այլ կերպ» (*Andra sätt att logga in*), ապա «Բոլնաս համայնք» (*Bollnäs kommun*): Այնուհետև մուտք գործեք BankID-ի կամ Mobile BankID-ի միջոցով: Երբ ձեր նախադպրոցական խմբի ուսուցիչները վերբեռնեն որևէ նյութ, որը կարևոր է ձեզ համար՝ որպես երեխայի խնամակալ, ապա դուք դրա մասին ծանուցում կստանաք հավելվածում:

Այս մասին կարող եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ www.unikum.net կայքում, ինչպես նաև դիտել տեղեկատվական տեսանյութեր և կարդալ այս գործիքի մասին այլ նախադպրոցական հաստատությունների խնամակալների կարծիքները:

Դուք կարող եք գտնել օժանդակ տեղեկատվություն, տեղեկատվական տեսանյութեր և շատ ավելին մեր կայքում՝ <http://www.bollnas.se/index.php/unikum>

Մենք ակնկալում ենք այս նոր գործիքի միջոցով ապահովել արդյունավետ ուսումնական գործընթաց: